

Մալումեանցի կողմից: Սև ի գուր չէ սպորդուել գրքովի 13-երորդ երեսում մի բնաորոշ տպագրական սխալ, իբր թէ Հէլդելբերգում Արծրունին «գըլխաւորապէս լուում էր Բաու, Կնիս, Բլունչի և Տրէպլէ պրոֆեսորներին (որոնք տնտեսագէտներ և պատմաբաններ են), մինչոն ժամանակ... լսում էր Հելմհոլցի բնական գիտութիւնները ընդհանուր հետեանքները» և այլն:

Հեղինակի համար ամենակարեւոր գլուխը պէտք է եղած լինէր գլուխ VՍ՝ «Ընդհանուր հալեացք Գ. Արծրունու գործունէութեան վերայ»: Բայց քննադատական զգացմունքի կատարեալ բացակայութիւնը հեղինակի մէջ դարձնում է գրքովի աղբ գլուխը անուսանելի, չը նալած որ չափազանցութիւնների և սխալների հետ խառը կան և ճշգրիտ տողեր:

Վերջ: Մալումեանցի գրքովը նպաստ չէ հալկական և ոչ իսկ ընթացիկ գրականութեան: Նոր ոչ տե-

ղեկութիւն կա և ոչ միտք. բայց թէ տեղեկութիւնների և թէ մտքերի կողմից հեղինակը ցոյց է տալիս իրան կատարեալ անձեռնհաս: Միակ գնահատելի կողմերը՝ արտաքին կողմերն են՝ թուզթը, տիպը, ոգևորած ոճը և նիւթի լաջող զասաւորութիւնը:

Սա գնահատում եմ մի հեղինակի ոգևորութիւնը. բայց երբ մի հեղինակ, ոգևորելով, այն տպագրութիւնն է անում, որ, կարծես լաւ չը մարսած բաներից է իօսում,— աղբալիսի ոգևորութիւն ընդունակ է միայն սառնութիւն լառաջացնելու:

Ա. Ա.

ՏԵՐ-ՂԵՒՈՒՆԴԵԱՆՅ ԳԵՈՐԳ.— ԵՐԻՈՐԴ ՆԱԴԻԿ ԿԻԼԻԿԵԱՆ, (Բոպէներ) և Յաւելած (բանաստեղծութիւններ). քառածալ, 71 երես. Թիֆլիս, տպարան Մ. Գ. Ռօտինեանցի, 1890: Գինն է 30 կոպ.

Այս գրքովի մեծագոյն մասը (55 երես) կազմում է մի ընդարձակ ոտանաւոր, որի համառօտ բովանդակութիւնը հետեւեալն է.

Թիֆլիսի մի խուլ փողոցի վերայ գտնող խարխուլ տներից մէկում ապրում էր թոկեր մանող խեղճ Արտուշը իւր կնոջ՝ Անանի և իւր միակ

դասեր՝ Նադիկի հետ: Մալր ու ազջիկ օգնում էին Արտուշին, բայց քնչասեւ կ'ուզէ, որ ընտանիքի նիւթական դրութիւնը աննախանձելի էր. Խիստ դանդաղ քալում (?) անց էին կենում Չարքաշ օրերի ձիք ձիք (ձիդ ձիգ ?) ժամերը.

և Արտուշի աշխատանքը շատ չնչին գրամով էր գնահատուում: Բայց ահա սկսուում է ուսաց և թուրքաց (յալտնի չէ թէ ո՞ր) պատերազմը: Բաղդը ժպտուում է Արտուշին և նախկին թուկեր մանողը դառնում է «տասը հաղարի» տէր, տեղափոխուում է խարխուղ տանից մի վայելուչ բնակարան և ինչպէս պէտք էր սպասել:

Նորոգւած կեանքը լուսատու ձայնով  
 Հոսում է առաջ քրքրջով ու  
 րախ...

Նադիկը տասը տարեկան է. նորա կրթութիւնը չանձնում են մի «Քրանտ տիրացուի», որ սկզբում անհամ և անալի պատմութիւններով ձանձրացնում է խեղճ աղջկան, իսկ վերջը նւիրում է նրան «սէրի (?) երգեր չանգով բազմադան» և «թուով անհամար»: Յանդուգն ուսուցչին վնդում են տանից և նորա տեղը բռնում է մադամը, որի ղէմքից,—հաւատացնում է հեղինակը,—«առատ ծորում է մեծ պասի գառը ձէթացուն (?) (երես 12)»: Նադիկին դա էլ չի զուր գալիս, ուստի նրան տալիս են ուսաց գիմնագիօն: Բայց ուսումնարանն էլ բարեբար ազդեցութիւն չ'ունեցաւ օրիորդի վերաջ. փոխանակ դասերին հետևելու՝ նա թող էր տալիս իրան գիմնագիստուհու չարութիւններ:

Պուշկինից անգիր է պի գրում  
 մաններ  
 Սովբել է փոքրիկ կաւալէրնե-  
 րից.  
 Եւ սէրի կեղտոտ ոտանաւորներ  
 Արտազրած ունի նրանց անտ-  
 րակից:

Մի պատկառելի թւով նամակ-  
 ներ  
 Կարող է ցոյց տալ վանից ու  
 Կօլից  
 Որով (?) ալս պստիկ երկրպա-  
 գուններ  
 Առաջարկում են փախչել հօր  
 անից:

Ջարմանալի չէ, որ ալք տեսակ թեթեամիտ օրիորդ դեռ ուսումը չ'աւարտած չորս անգամ սիրահարուում է, չորս անգամ թողնում. և վերջ ի վերջու անպէս տաք է կպչում մի «պօրուչիկից», որ ստիպում է ծնողներին հանել իրան գիմնագիօնից: Ճար չը կար, հանեցին:

Այդ ժամանակները հայոց թատրոնի փառաւոր ժամանակն էր: Արամեանը ընդհանուր չարգանքի և ոգեւորութեան առարկալ էր դարձել: Այդ ոգեորութիւնից անմասն չէ մնում զգալուն Նադիկը: Հալկական բեմը անպէս է կախարդել նրան, որ «Համլէտ»-ի ներկայացման ժամանակ նա շատ կ'ուզենար «թուչել օթեակից և ներկայացնել ցնդւած Սֆէլիան»: Բայց դժբաղդաբար նա

Դեռ չը գիտէ մալրենի խօսքի  
 Հազար մի տեսակ թոթովանք-  
 ները (?).  
 Տանում է զահլան ծերուկ  
 պապինկի,  
 Թէ պիտի կարդամ հայոց գրերը:

«Ջահիլ պօրուչիկը» մոռացութեան տրւեցաւ: Նոր կեանք է սկսում օրիորդ Կիլիկեանի համար: Նա աչժմ չըջապատուում է իրան թատրոնական երկրպագուներով, որոնք հաճուպստութիւններով շոյում են օրիորդին քնասիրութիւնը:

Խեղճ հարեանիքի ազատիչ հրեշ-  
տակ  
Տեսնում են նրանք Կիլիկեան  
խօսքում (?)  
Եւ գովասանք խիստ շատ ու  
անտակ (?)  
Մեծ տեղ են բռնում հալացած  
սրտում:

Ապալիսով նախկին օտարացած  
չարանճի գիմնադիստուհին դառնում  
է ազգասէր օրիորդ:

Մի տարի՝ ամառը անցկացնելու  
համար՝ Արտէմ Մինէլի Կիլիկեանը  
գալիս է իւր ընտանիքով Բօրժօմ:  
Այստեղ է լինում իւր ընտանիքով  
նաե քաղաքի չալտնի կրեսոս՝ Արզաս  
Նիկիտիչ Նաթանեանը: Նաթանեանը  
ուհի երեք որդի: Մեծը, որին ար-  
տաքսել էին համալսարանի, չալտնի  
չէ թէ որ ֆակուլտէտի, երկրորդ  
կուրսից, ծնողների ստիպմամբ ամուսնացել էր: Միջակը ամենից խե-  
ղճ էր, կառավարում էր հօր գոր-  
ծերը, իսկ կրտսերը՝ անառակ վօ-  
լօղեան կանանց չետեից ընկած, ան-  
հաշիւ շապուտ էր հօր դատած փո-  
ղերը: Կիլիկեանները Նաթանեանե-  
րին դեռ թիֆլիսից էին ճանաչում,  
բայց ամարանոցում նրանց չարաբե-  
րութիւնները ակելի սերտացան: Ա-  
մուրի եղբայրներին ակնքան չաճախ  
էր պատահում տեսնել և զրոյց աս-  
նել օրիորդ Կիլիկեանի հետ, որ կարճ  
ժամանակամիջոցում երկուսն էլ սի-  
րահարում են նորա վերալ: Նաղիկը  
անտարբեր է դէպի միջակ եղբայրը  
և հաւանում է վօլօղեակին, սակայն  
ծնողները զերադասում են «ապահով»  
Պետր Արզասիչին նորա վշրանքը  
վաւելող եղբօրից: Գուստրը ընդդիմա-

նում է ծնողների կամքին և չալտ-  
նում է, որ վճուել է երբէք չ'ամուս-  
նանալ և մտնել կուսանոց: Սակայն  
չ'ուզենալով մերժել վօլօղեակի սէրը,  
նա նամակով տեսակցութիւն է նշա-  
նակում նրան «Յ. պարկի ծայրին»:  
Չորս օրից չետոյ միայն Նաղիկը  
ստանում է իւր նամակի պատաս-  
խանը: Վօլօղեան առաջարկում է  
նրան պսակել Պետրի հետ, իսկ  
այնուհետև, — ակելացնում է նա, —  
«իբրև տանու քրտն» «աներկրաչ  
չուտով կարող ենք զրօսնել ազատ  
թե ի թև»: Նաղիկը խոր խոցած  
սրտով ընկնում է ուշաթափ: Այդ  
օրւանից նա էլ չի գուրս գալիս  
տանից: Սենեակում օրերով փակւած,  
նա աչքը չէ հեռացնում «վալի»  
պատկերից:

Մինչ այս մինչ այն Արտէմ Մի-  
նէլիչի ոսկիները քամու պէս կոր-  
չում գնում են առողջութեան հետ:  
Անանը սկսում է տան ծախքը չափա-  
ւորել, իսկ Նաղիկը մտածում է  
դատնալ «աղջիկ վարժապետ»: Դար-  
ձաւ թէ որ, չալտնի չէ, միայն եթէ  
հաւատանք հեղինակին, մի տարի  
սրանից առաջ Գօլովիսկի պրօս-  
պեկտով շտապ քապերով անցնում  
էր մի խելագար կին: Այդ կինը օ-  
րիորդ Նաղիկ Կիլիկեանն էր:

Գրքովի սկզբում հեղինակը ծա-  
նուցանում է, որ իւր նպատակն է  
«մի անմեղ հաճուք միայն պատճա-  
ռել»: Գուցէ այդ ասած է համեստու-  
թեան համար միայն և հեղինակը  
ուղեցել է ակելի բարձր դերում  
պատկերացնել մեր նահապետական  
կենքի խանգարման և անսխտեմ ու  
վապր ի վերոյ կրթութեան կորստա-

բեր հետևանքները, — բայց չէ կարելի չը նկատել, որ նոյն իսկ իւր լաւ տարարած համեստ նպատակին չէ հասնում հեղինակը։ Եւ իրաւի «Օրիորդ Նաղիկ Կիլիկեանի» բովանդակութիւնը ինքն ըստ ինքեան ոչինչ նորութիւն չէ ներկայացնում։ Գեղարւեստական և հոգեբանական ճշդութիւն բացակայ է նկարագրութիւնների մէջ, թէև ամբողջ վէպիկի նիւթը իրական կեանքից է վերցրած։ Արդարև, տեղ տեղ երևում են հումորի թույլ նշույններ, բայց այդ նշույնները շատ հեռու են «ամմեղ հաճոք» պատճառելու ձգտումից։ Աւելացրէք այդ ամմեի վերայ և այն, որ հեղինակը բաւականաչափ չէ մշակել իւր լեզուն, ի չարն է գործ դնում բանաստեղծի ազատութիւնը (licentia poetica), իսկ երբեմն ուղղակի մեղանչում է տաղաչափութեան օրէնքների գէմ։ Այսպէս, օրինակ, նա գրում է 'ւ փոխ. և, շողոքորթում 'ի'ն' փոխ. շողոքորթում էին, թ' երբ փոխ. թէ երբ,

խ ի ն դ ո վ փ ո խ . խ ն դ ու թ ե ա մ բ , ա ն ս ա ս փ ո խ . ա ն ձ ա չ ն և ա լ լ ն . Պատահում են և այլ տեսակ կուրեօգներ.

«Գզգզած հերքը ուսերի նրա  
Թափւել 'ին խառը, անփողթ  
ու անկապ» (55)

կամ «Բայց մինչև այժմ տիկին Ա.  
Նանուց  
Ոչինչ չեմ պատմել ես կար-  
դացողին  
Թէ ինչ համ ու հոտ տես-  
նում էր մարդուց...»

Բացի վէպիկից այս գրքուկի մէջ՝ որպէս «լաւելած» տպած են և մի քանի «բանաստեղծութիւններ», որոնց մէջ ամեն բան կը գտնէք, բայց բանաստեղծութիւն՝ ոչ։

Խորհուրդ կը տալինք պ. Տէր-Ղևոնդեանին փորձել իւր ուժերը գրականութեան ուրիշ ճիւղերում. ոտանաւոր գրելու համար մի առանձին ձիրք չէ պահանջում, սակայն ամեն ոտանաւոր բանաստեղծութիւն չէ։  
ՎԱՆԿ

Ն Ո Ր Ս Տ Ա Ց Ի Ա Մ Գ Ր Ք Ե Ր

- 1) Навасартянецъ Баграць,—Диссертация на степень доктора медицины. „Еъ вопросу о влияніи Эссендукской № 17-й воды на усвоение и обмяънъ азотистыхъ веществъ“. С.-Петербургъ, типогр. газ. „Новости“, 1890 г. да.
- 2) Калантаръ Александръ.—„Скотоводство въ связи съ окружающими его условіями“. Докладъ читанный 9-го Января 1890 г. въ I. отдѣленіи Имп. Вольн. Экон. Общ. С.-Петербургъ, 1890 года, типогр. Демакова. Цѣна 40 коп.
- 3) Калантаръ Александръ,—„Докладъ Калантара о V отдѣлѣ молочн. хозяйства Кавказск. выставки 1889 г., читанный въ засѣд. Петерб. соб. анія сельскихъ ж. зяйевъ“. С.-Петербургъ, 1890 г. типографія Товарищества „Обществ. Польза“.
- 4) ԲԱՅՅԻ.—„ՀԱՅ ԿԻՆԸ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆՈՒԹԻՒՆԸ“ ԹԻՓՂԻՍ, տպարան Տ. Նաղարեանցի։ Գ/նն է 1 ր. 50 կոպէկ։